Վիեննական Ուխտին «ՅՈՒՇԱՐՁԱՆ»ը կ'ըսէ.

« 1773 Մայիս 19ին կը հաւաքուին ի Վի[1], երբ կը յիշեն երիցագոյններուն ուսանք բէ Մխիթարայ ծրագրին մէջ կար Տրիեստ վանատուն մը բանալ, և կ'որոշեն միաբան այս միտքը իրագործել» (էջ 4)։

Թէ Մխիթար Թրիեստ վանատուն բանալու ծրագիր մ'ունեցած ըլլայ, ինչպէս կը կարծէ ՅՈՒՇԱՐՁԱՆ, նախ այդպիսի աւանդութիւն մը գոյութիւն պիտի ունենար բուն իսկ Հիմնադրիս Ձեռակերտին մէջ. մինչ դեռ ո՛չ Մխիթարայ անթիւ նամակներուն, ոչ նոյն ժամանակի Մխիթարեան թղթակցութեան և ոչ Մայրավանքիս ժամանակագրութեան մէջ բառ մը կայ։

Թրիեստ վանատուն բանալու, մենաստան հիմնելու մտադրութիւն մը գոյութիւն ունեցած է առաջին անգամ Մելգոնեանի աբբայութեան երկրորդ տարին, և հիմնադիր ուզած է ըլլալ Կ. Պոլսեցի Հ. Գաբրիէլ Փոքը կոչեցեալ՝ Միաբանութենէս վարդապետ մը, որ եղած է իր ընթացքով անկարգ, ինքնահաւան և անհնազանդ անձ մը։ Մելգոնեան աբբահայրը այսպէս կը գրէ առ Հ. Վրդանէս Ասկերեան.

« Մինչև ցգարուն աստ է [Հ. Գաբրիէլ փոքը], և պատճառ սպասելոյն է « զնմանութիւն Մխիթարայ աբբային բերել. քանզի թուղթ առ թագուհուն առաքեաց՝ « որպէս ականատեսքն պատմեցին, տալ ինքեան զտեղի ի Թռէստ, շինել անդ շի- « նուածս, կառուցանել զտպարանս, զկազմարանս, զդպրատունս. և առ յապայ զմե- « նաստանս զերագոյն քան զմակամտածութիւն առաքելոյն յօդափոխութիւն. և լի- « նել օգտակար ազգին յոյժ յոյժ. և ունի առաջին հիմնադիր մեծի իրագործութեան « իւրոյ զտէր միքայէլն, զտէր դաւիթն, զտէր Ճիվան մարիայն, և զամենայն որ « միանգամ ընդ ակամբք մեզ հայեցին, ընդ որս է և կարապետ վարդապետն » (Գր. յամին 1752 Նոյեմբ. 25)։ Սակայն այդ շարժումները անյաջող վերջաւորութիւն մը կ'ունենան հակառակ այն տարածուած լուրերուն՝ թէ ձեռք բերուեր են ակնկալուածները. մինչդեռ « այն ամենայն սուտ և հնարք խաբէութեան իթալիան քահանայի, « որ պատրեալ զտէր միքայէլն առեալ է զայնչափ դրամ ի ձեռաց Նորա ». (գրէ Մելգոնեան առ Հ. Միքայէլ վրդ. յամին 1753, Յնվր. կամ փետր)։

Հ. Գաբրիէլի այս դիտաւորութիւնը անշուշտ չէր անծանօթ նախկին Թրիեստեան յետոյ Վիեննական (երբեմնի Վենետկեան) Հայրերուն։ Ուստի պատմաբանօրէն խօսելով՝ Մխիթար չէ այդ ծրագրին յղացողը, այլ կրօնաւորական հոգւոյն անսասողանձ մը, և խիստ տարօրինակ է՝ օգտագործել ուզել այդպիսի անձի մը ձգտումները, արդարացնելու համար ծագում մը, հակառակ ճշմարտութեան՝ ընծայելով զայն Մխիթարայ։

Յարգոյապատիւ և գերապայծառ տեառն Ստեփաննոսի վարդապետի
և աբբայհօր ողջունիւ խնդալ ի քրիստոս

Յաւուրս յայսոսիկ ի խնդրոյ ժողովրդեան ստիպեալ վասն լսելոյ զբանս աստուծոյ, և ի գութ շարժեալ ի վերայ նոցա իբրև ի վերայ ոչխարաց, որոց ոչ իցէ հովիւ, չոգայ առ արհիեպիսկոպոսն մայրաքաղաքիս, և խօսեցայ ընդ նմա վասն պակասութեան տեղւոյ ի լսել զխոստովանութիւն, և հաղորդել, և քարոզել զբանս աստուծոյ. ասաց, բարիոք է խնդիրդ։ Նոյնպէս խօսեցայ և ընդ աւագերիցու եկեղեցւոյ սրբոյն ստեփաննոսի վասն բանիս այսորիկ։ Իսկ նոցա խորհուրդ արարեալ ետուն ինձ զմատուռ մի ի կողմն ինչ հրապարակի սրբոյն ստեփաննոսի, որ է ըստ մեծութեան եկեղեցւոյն հայոց,

1. Ասինքն Ս. Ղազարէն անջատուող Հարք. — Հ. Ղ. Տ.